

# ՊԵՏՐՈՍԻ ԵՃԱՆԱԳԻՆ ԲՐԱԴԱՐԱՆ

№ 92

№ 93

ԳԵՂԱՄ ՍԱՐՑԱՆ

## ԳՅՈՒԻԼՆ ԱՐԱ

(Արևիկելան պոեմներ)

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԱՎՐԵՎԱՆ

1985

891.99

Ա-27

891.99	Чиприан	38263
У24	Ужгород	
С239	С/Хи	

19 NOV 2011

ՊԵՏՈՒԹՅԻ ԵՎԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Na 97

No 97

891.99 46748 001862  
U-27

# ԳՅՈՒԽԵՐԱ

(Արեվելյան պոեմներ)

6  
446



Պատ. Խմբ. Ռ. Ա. Բայան  
Տեխ. Խմբ. Տ. Խաչվանի Ժյան  
Սրբագրիչ Ս. Շահբազյան

Պետհրատի տպարան  
Գլավլիու 255. Պատվեր 833<sup>ա</sup>  
Հքատ. 3374. Տիրաժ 5000.

## ԳՅՈՒԼԻՆ ԱՆԴԱ

1

— «Պարսկուհի, վարդի պես մի աղջիկ են,  
թռւիի պես դալար ես դու,  
Կարծես թե Շիրազի մեծ բախչից են  
Ու բույր չես տվել մարդու»:

— «Պարսկուհի, աչքերըդ նշի ձև են,  
Սաթի պես բիրերըդ սե,  
Ու թոչող ծիծոփ զույդ թևեր են  
Հոնքերըդ կամար ու կեռ»:

— «Պարսկուհի, քեզ արել սիրել ե,  
Թիթեռն ել սիրել ե քեզ,  
— «Պարսկուհի, չարսավըդ սաթին ե սե,  
Ամպի պես պատել ե քեզ»:

2

Այդպես են յերգել քեզ, պարսկուհի,  
Իրանցի շահիրները տրփոտ,  
Շահիրները քո հարեմ յերկրի,  
Ուշ զեշերից մինչև առավոտ...

Այդպես են յերգում հիմա ել  
Աֆիհնով հարբած իրանում,  
Ուզում են յերգել ու հայել,  
Իրանցի հաղար խաս խանում:

Բայց մւր ե իրանը քո հիմա,  
Դու ապրում ես ուրիշ մի յերկրում,  
Ուր չկա հաշիշ ու հինա,  
Ու մեկը քեզ յերգեր ե գրում:

Գուցեց դու ոտար ես այդ յերկրին,  
Զես յեղել գուցեց իրանում,  
Զգիտես թե ինչպես քեզ բնին,  
Զեն պատմել, դու չես իմանում:

... Յերեկի իրանցի մի թաջիք,  
Բարձել ե ուղտերի մեծ շարան,  
Ու մի որ բերել ե նուշ ու չիք,  
Ես յերկրում ծախելու համար:

Ու վերջին ուղտերի վրա,  
Վոսկեկար փարզեքով նախշած,  
Բարձել ե զույգ-զույգ քյաջափա,  
Ու իր հետ բերել ե իր կանանց:

Ու իր հետ բերել ե—ուղտապան  
Մի թշվառ Յուսուֆ կամ Հասան,  
Վոր բորիկ ե քայլել վողջ ճամբան,  
Ու հասել ե եստեղ՝ Յերևան:

Ու իր հետ, իր կանանց համար,  
Բերել ե յեթիմ մի դարավաշ  
Ցնցուի հազած մի Բահար,  
Որավարձը մի հատ չոր լավաշ:

Յեվ հետո՞ ով իմանա ինչնէ,  
Զի ուզել յետ գառնալ իրան,  
Խանութ ե բացել թիրմտչու,  
Հաստատվել ե եստեղ՝ Յերևան:

Յեվ ապա՞ որեր են անցել,  
Տարիներ են անցել յերեկի,

Ուղտապանն ու Բահարը թաջիքի  
Դունը դուլ են մնացել...

Ու մի որ սիրել են իրար,  
Կամ թաջիքը «խոհացել ե» նրանց,  
Քյարին ե արել շարիաթով,  
Յերկրուսին տվել ե միմյանց:

Հնորյա եղ արմատն իրանցի,  
Տվել ե շատ նյուղեր, վոր հիմի  
Եղ նյուղերը ծաղիկներ են բացել,  
Վոր քեզ պես մի աղջիկ լինի:

## 3

Հիմա դու ԿիՄ ունես գոշիդ,  
Գյուլխանդա, ջահել կոմսոմոլկա,  
Դու ցրել ես գարերի փոշին,  
Քեզ վրա ել չարսավ չկա:

Բայց գիտեն, սերունդներ մեռան  
Թաջիքի ու խանի հլու,  
Ու նրանց շիրիմների վրա  
Նորաբաց մի լալա յես դու:

Հիմա քո մեջ պայքարն ե յեռում,  
Հիմա դու վազքի հետ որերի,  
Գյուլխանդա, նոր կյանքն են կռում  
Վաղվա Յուսուֆի ու Բահարի:

Հենց այդ ե, վոր հուզում ե հողիս,  
Հենց այդ ե, վոր զգում ես, վոր կաս,  
Գյուլխանդա, սիրելի պարսկուհի,  
Սըեկի պես վառման կոմսոմոլկա:

## ԳՅՈՒՂՆԱՐԱ

**Ե**ւ, խանի յերկիր, թաջիրի յերկիր,  
Գյուղնարի պես վարդ Շիրազում չկար,  
Գյուղնարի պես վարդ, հարեմի յերկիր,  
Իրանի վոչ մի հարեմում չկար.

Կելլանի ծուխը թե յերկինք յելներ,  
Աստղերին հաներ՝ ենպես լույս չկար,  
Գյուղնարի սիրաց վոնց արև լիներ,  
Արեր վկա՝ Իրանում չկար.

Մայիսին բացվող նշենին անգամ  
Գյուղնարի բույրն ու հմայքը չուներ,  
Անձրեից հետո յեսամանն անգամ  
Գյուղնարի քաղցը թովչանքը չուներ:

**Ե**յ, խանի յերկիր, թաջիրի յերկիր,  
Գյուղնարի պես վարդ Շիրազում չկար,  
Գյուղնարի պես վարդ, հարեմի յերկիր,  
Իրանի վոչ մի հարեմում չկար.

1

Մի աղջիկ եր, ապրում եր Իրանում,  
Գորգագործ մի աղջիկ եր նա,  
Նա մի ծեր հայր եր ինամում,  
Գյուղնարա եր անունը նրա.

Միրուն եր Գյուղնարան, շատ սիրուն,  
Թիմեռից թովուն եր նա,

Աչքերին սյուրմա չեր քաշում,  
Չեր զնում մազերին հինաւ.

Նա խանի խանումների համար  
Հյուսում եր համամի խալիչա,  
Շիրազի վարդանոցից ել վառ—  
Բայց խանի խանումների համար.

Խփում եր դանակը հինգամքին,  
Կարում եր թելերը գունագեղ,  
Գյուղնարի հինած գաղզյահին  
Շիրազը կարող եր նախանձեր.  
Գյուղնարի հյուսած վարդերից  
Կիսարվեր բյուլբյուլը անզամ,  
Նա կարող եր մետաքսի թելերից  
Պարտեզներ հյուսել անթառամ:

Մի աղջիկ եր, ապրում եր Իրանում,  
Գորգագործ մի աղջիկ եր նա,  
Նա մի ծեր հայր եր ինամում,  
Գյուղնարա յեր անունը նրա.

2

Գյուղնարա, սիրուն Գյուղնարա,  
Ղալամբյար հոնքերիդ տակին  
Թախիծ կա աչքերիդ վրա,  
Գյուղնարա, սիրուն Գյուղնարա:

Մաղկագարդ չթով սքողված  
Սրտիդ մեջ ու հոգուդ վրա  
Տրտոնչ կա, բողոք կա պահված,  
Գյուղնարա, վշտոտ Գյուղնարա:

Գյուղնարա, գորգագործ աղջիկ,  
Թոյ յերկի բորբ արևի տակ  
Համնում ե բաղամ ու նարինչ,  
Բուրում են գաշտերը թովիչ,

Սակայն դու արեի կարոտ,  
Արեից ժպիտ չես քաղել,  
Տրտունջոտ քո հոգու համար՝  
Նարինջը կարիճ ե դառել:

3

Լսվում ե մրմունջը թառի,  
Նվում ե սեզահը վերից,  
Ճմլվում ե սիրտը Գյուլնարի,  
Միծաղներ են լսվում հարեմից:

«Շարյաթին դեմ զնալ չի լինի,  
Ուրացում ե առանց չաղբայի, —  
Կարծես թե լսվում ե խանի  
Խոսքերը ականջին Գյուլնարի,

Կարծես թե տեսնում ե նրան,  
Զգում ե սարսափն ահարկու,  
Բայց հյուսում ե հինգածքի վրա՝  
Կուտակված տրտունջը իր հոգու,

Խալիչա ե հյուսում Գյուլնարան,  
Հույզերից ե հյուսում կարծես նա  
Ահա նա հինգածքի վրա  
Նկարում ե պատկերը իրա:

Ահա նա կանգնած ե ենտեղ,  
Մետաքսե թելերից հյուսած,  
Աչքերը վառվում են կարծես  
Չարսակը նետել ե նա ցած:

. . . Լսվում ե մրմունջը թառի,  
Նվում ե սեզահը վերից,  
Հուզված ե սիրտը Գյուլնարի  
Հարեմի թառից ավելի:

4

Ու մի որ, յերբ արևն յելավ,  
Ու ժպտաց իրանի վրա,  
Դուրս յեկավ Գյուլնարան տնից՝  
Խալիչան ձախ ուսի վրա:

Հասավ նա պալատը խանի,  
Թորգազարդ ոթախը նրա,  
Կլկում եր ջուրը ղեյլանի՝  
Խանի դեմ, սանդալի վրա:

Հեյլանի հուզված ջրի պես  
Թպրտում եր սիրտը Գյուլնարի,  
Ամոթով խոնարհվեց նա կարծես,  
Ու դմկամ բարեկց խանին:

— Գյուլնարան նվեր ե բերել,  
Գյուլնարան տրտունջ ունի, խան,  
Թույլ տուք, վոր բոլորի հետ մեկ տեղ,  
Գյուլնարան դեն զցի չաղըրան:

Ցեղ վիեց նրա դեմ ու դեմ  
Խալիչան՝ բողոքը իրա,  
Գյուլնարան կանգնած եր ենտեղ,  
Համարձակ, առանց չաղըրա:

— Զնդմ, շնո՞ւ, — խանը վորոտաց,  
Դղրդաց պալատը աղմուկից,  
Գյուլնարան ճշաց, ընկավ ցած,  
Ցեղեսին իջած ապտակից,

Ներս ընկան ձառաները խանի  
Ցեղ կանայք խանի հարեմից,  
Փովել եր մարմինը Գյուլնարի,  
Գյուլնարան տնքում եր ցավից:

Դուրս տարեք, թող մորթեն զբան,  
Թող փրթեն առաջը շների,  
Իմ հոգում առանց չադրա  
Վոչ մի կին չպետք եւ ասլրի.

Գյուղնարմ, գորգագործ աղջիկ,  
Քո յերկրի բորբ արևի տակ  
Հասնում եւ բաղամ ու նարինջ,  
Բուրում են գաշտերը թովիչ.

Սակայն դու արևի կարոտ,  
Արեից ժպիտ չես քաղել,  
Տրտոնջոտ քո հոգու համար  
Նարինջը կարիճ եւ դառել.

## 5

Այդ որը իրինային պահին,  
Այրունը հոսեց Գյուղնարի,  
Մեռավ նա արևի կարոտ,  
Իրանի գյուլը սարահին.

Եյ, խանի յերկիր, թաջիրի յերկիր,  
Գյուղնարի պես վարդ Շիրագում չկար,  
Գյուղնարի պես վարդ, հարեմի յերկիր,  
Իրանի վոչ մի հարեմում չկար.

Ղելանի ծուխը թե յերկինք յեխեր,  
Աստերին հասնե՞մ ենպես յույս չկար,  
Գյուղնարի սիրտը վոնց արև լիներ,  
Արեց վկա՝ Իրանում չկար.

1929

## ԹԱՌՁԱՆԻ ՄՈՐՄՈՔԸ

Եհշիլանի բաղերի մեջ,  
Թաղերի մեջ կեր ու խում ե,  
Բյուրյուների խաղերի մեջ  
Վարդի թուփը արնախում ե,  
Հարեմի մեջ հեքը թառի  
Մրտի նման բարախում ե,  
Թաղան, սիրած, զյողալ յարիդ  
Կամքը իր հոր փափախում եր.

Ցեսամանի ծառը ուներ  
Ցարիս նման խաս շրթունքներ,  
Սև խաղողի թաղը ուներ  
Ցարիս նման սև աչունքներ,  
Բյուրյուների բաղը ուներ  
Ցարիս այտեն՝ վարդի թերթեր,  
Թաղան, սիրած, զյողալ յարիդ  
Հոր քար սիրտը՝ ամուր ըերդ եր.

Թառի առաջ սիրտս բացի,  
Ցարի ցալը թառն ի՞նչ անի,  
Վարդը տեսա՝ դարդս լացի,  
Վարդը աչքի ցողն ի՞նչ անի,  
Թաց աչքերըս տվի բարձին,  
Վմիս, չոր բարձը ինձ ի՞նչ անի,  
Թաղան, սիրած, զյողալ յարիդ  
Հերը՝ հացով ծախեց խանին.

Մի թառլան ուղտ չոքեց զըռան,  
Շեմքին ախր են իմ սիրան եր,  
Խանի ուղտը կոխեց վրան,  
Սիրալս ախր սիրով լիքն եր,  
Յարըս խանին խաղալիք եր,  
Ինձ համար նա կյանքս ինքն եր,  
—Թառղան, յարիդ համար բերած  
Խաս քյաջափան մահով լիքն եր:

Ե՞լ, բաղամազյուլ չագրան վըրան  
Քյաջափի մեջ յարըս ինքն եր,  
Խանզը յարիս գեղին զափան,  
Աչքիս առաջ մահըս ինքն եր.  
Ուղտը կանգնեց՝ յարըս վրան,  
Վուրիսի տակ, վճխ, իմ սիրան եր,  
—Թառղան, սիրած, զյոզալ յարիդ  
Ուղտի վրա հարեմ տարան:

1933

## Ի ՐԱ Ա Ն Ի

## Ա Ռ Ա Զ Ի Ն Ց Ե Ր Գ

1

Յերգում եյին փողոցում, շուկաներում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր, յերկու յերգիչներ,  
Մինչև արև թագուհին իր ծիրանին հավաքի,  
Մինչև կապույտ շղարշով յերեկօն իջներ,  
Մինչև ազանը ձգվեր խորախորհուրդ մրմանջով  
Կոուրներից հողաշեն ու մզկիթներից,  
Մինչև աղքամը վերջին, կյանքի գառը տրտունջով  
Աղերսները վոլրաձայն կտրեր աներից,  
Մինչև աղոտ լույսերով փայլեր ամեն ապակի,  
Ու սկ չաղքայի նման գիշերը իջներ,  
Յերգում եյին փողոցում, շուկաներում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր, յերկու յերգիչներ:

2

Սիրում եյին այդ յերկու յեղքայրներին հարազատ,  
Յերգիչներին՝ հոգեթով հույյերի աղրյուր,  
Նրանք յերկու յեղքայրներ իրենց յերգերով ազատ  
Մտնում եյին ամեն սիրա, բացում ամեն զուռ  
Նրանք յերկու յեղքայրներ, յերկու ծաղկած նշենի,  
Յերկու արքի նորածագ, յերկու վարդատունկ,  
Նրանք յերկու յեղքայրներ, կարիքը միշտ վեշերին,  
Ամեն գիշեր միասին զնում եյին տուն:

Նըանք մի զույդ յերգիչներ հարազատ ու սիրալի,  
Մաղկոցների բուրմունքը նրանց ջնջն ուստամ.  
Նըանք մի զույդ յերգիչներ ու աշխաթհում վարդաստան  
Վարգերի փուշն եր միայն բաժինը նրանց,  
Այդպես յերգով չեր մտել վոչ մի սոխակ Դյուլիոստան՝  
Խանչախների հոգսերի սրտերում խրած,  
Այդպիսի յերգ չեն լսել շուշանները սաղափի,  
Յերը վոր զեփյուոը նրանց շուըթերին իջներ,  
Յերգում եյին փողոցում, շուկաններում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր, յերկու յերգիչներ

3

Ու յերը բացվում եր արփին, փոռում աշխարհի վրա  
Նորինցագույն մետաքսի քնքուշ զադիվան,  
Յերը ենալի սարերից իջնում եր հովը ահա՝  
Համրութելով անցնում եր ամեն վարդաստան,  
Յերը իրանի վարդարույր կանանց աչքերի նման  
Բացվում եյին վարդերի կոկոնները վաս,  
Բուրում եյին ջինջ ողում ունան, վարդ ու յեսաման,  
Խմում եյին արկի ճաճանչները զաս,  
Ու յերը բացվում եյին նուրբ շուշանները սաղափի,  
Թերթիկներով լուսածոր՝ աստղի թարթիչներ,  
Յերգում եյին փողոցում, շուկաններում քաղաքի,  
Բակերի մեջ, ամենուր, յերկու յերգիչներ,

4

Յեվ հնչում եր այդ յերկու յերգիչների սրտահույդ՝  
Մրտամորմոք թախիծի յերգը վարարուն,  
Յեվ հնչյունները յերգի՝ վորպես հույզերի վոդկույդ.  
Մախում եյին կոկոնով նրանք բազարում  
Յեվ հնչյունները յերգի սառում եյին շուկայի  
Մութ կամաբների ներքո, ընկնում եյին վար,  
Վորպես անկենդան մետաղ պղնձաձույլ մի շահի,  
Իրու յերգի, հույզերի ու արցունքի վարձ  
Յեվ հավաքում եյին լուռ յերգիչները այդ յերկու  
Շահինները պղնձի անկենդան ու պաղ,  
Գնում եյին ընկճված, ամոթահար ու նկուն,  
Անցնում եյին շուկաններ, մտնում թաղից թար

5

Ու տարածվում եր նրանց՝ Սաֆարի ու Զեյնալի  
Յերգի հոչակն ամենուր, մտնում տնից տուն,

## Ե Ե Ր Կ Ր Ո Ր Դ Յ Ե Ր Գ

1

Արդուլ խանի հոյաշեն պարտեղները անսահման,  
Ոթախները գորգազարդ՝ մետաքս ու ատլաս,  
Արդուլ խանի մարմարե ապարանքը աննման,  
Սնդուկներում մարգարիտ, գոհար ու ալմաստ.  
Արդուլ խանի ուղաբերի շարանները անհամար,  
Մնացած գորգերով բենած ձգված չինդ ու Զին,  
Արդուլ խանի բաղերում վորքան, վորքան նուշի ծառ,  
Վորքան թաղեր խաղողի, ծիրան ու անջիր,  
Արդուլ խանի հարեմում փորքան լուսաշող գոհար,  
Աղամանդներ շոշողուն աստղերից վճիտ,  
Արդուլ խանի պարտեղի վարդերից ել թարմ ու վառ  
Քանի չքնաղ փերիներ հարեմի միջին.

2

Ապարանքի գեմ դիմաց ավազանը մարմարի,  
Շատրվանը ալմաստի հալոցք և ծորում,  
Շուրջը գորգերն ալվան ծաղիկների, վարդերի,  
Վորոնց վրա արևն իր գուշներն և ցողում:  
Սանդուխներին՝ մետաքսէ ասեղնակար բարձերին,  
Նստառել են անկանոն կանայք Արդուլի,  
Հովը իջել ե նրանց արքեղումն վարսերին՝  
Համբույր ու բույր տանելու վարդին, սյումբուլին:  
Ցերկու ջանել դարավաշ սինիներով արծաթի,  
Նախշուն գինջաների մեջ բերում են գյուլար,  
Վարդի բույրով հազեցած, վորպես չքնաղ հեքյաթի  
Հրաշք աղբյուրների ջուր, նրա պիս զուլար:

## 3

Ու նրանց մեջ նստել ե հարեմի ծեր ներքինին,  
Գլխին գեղին արախչեն, հազին արխալուզ  
Վրան փաթթած յերկնագույն իր մեջկապը սաթինի  
Դեմքը՝ թոշնած գեղձի պիս, անրեխ, անմորուք:  
Կատակում են նրա հետ ու քաշքառմ են նրան  
Շարժութերով գրզափիչ լավեց ու կրօստ,  
Արգուլ խանի հարեմի կանայք սողունի նման  
Գալարվում են, տապկլատում իրը նրա մոտ  
Ու բրձում ե անզոր ծեր ներքինին հարեմի,  
Ցեվ կանացի իր ձայնով ճշճում անդուր,  
Բայց քաշքառմ են նրան ու զարարվում են ելի  
Աղաչանքը ներքինու իզուր ու կզուր...

4

*1008/37263*  
Ավազանի շողշողուն, մարմար պուռնկին նստած,  
Իր մոքերին անձնատուր չքնաղ նաջիբան  
Բաղամաձել աչքերի յերկար թարթիչները թաց՝  
Կախել եր լուրթ ջրերին, զիշերվա նման  
Ու կարծես թե վարդերի ցոլքն եր ընկել այտերին,  
Կուրծքը յենում եր իջնում, վորպես հովի խաղ,  
Նկարել եր լուսաշող ավազանի հայելին  
Նրա պատկերը նրբին, նոռու պիս չքնաղ:  
Ցեվ ջրերի հայելում հուռմ եր կուրծքը նրա,  
Կարծես այդ հերն եր հուզում կոհակները բյուր,  
Կարծես զեխյուռը միան վառ կարստովք նրա,  
Նրա համբույրի համար մտավ խաղաղ ջուր:

5

Արդուլ խանի հարեմի աղամանդն եր նաջիբան,  
Նրա զարզը սիրելի փողջ հարեմի մեջ.  
Նրա հայրը հանդերում կյանքը մաշած մի չորան,  
Աղբյուրների պատճեն սաների պիս խեղճ:  
Ուրախ պատճեն սաների պատճեն արավ աղջկան,



Տվեց խանի հարեմին վորպես մի փեշքեց,  
— Արարիչ տեր, — ասաց նա, — իմ սիրելի Նաջիրան  
Խանում լինի բախտավոր՝ խանումների մեջ,  
Բայց հոգու մեջ ամպ ուներ ու դժբախտ եր Նաջիրան,  
Մոռենում եր ծեր խանին խորը նողկանքով.  
Ու թոշում եր ջրափի զյուլը սարահու նման,  
Ցերք թեքվում եր արևը, իշնում յերեկոն

## 6

Ավաղանի ավին մինչ լուռ թախծում եր Նաջիրան,  
Ու արցունքն եր լվանում վիշտը աչքերի,  
Խանի կանանց ճանկերից, ցամքած աղվեսի նման,  
Դուրս եր պրծել հարեմի ծերուկ ներքինին,  
Ու քրքչում եյին ղեն՝ նստած մետաքս բարձերին,  
Հնչուն ծիծաղը նրանց առվի պես զուլալ,  
Ղարավաշները նրանց, Արդուր խանի հարսներին,  
Բերում եյին սառնորակ շարբաթ ու զյուլար  
Ու յերք տրտմությամբ կախված՝ Նաջիրայի ամպի պես  
Թարթիշները սեաթույր՝ ջրից բարձրացան,  
Մաղկոցից գուրս, փողոցում, անցնելով բակ ու պարտեզ,  
Սրտակեղեք կանչի պես հասավ յերգի ձայն

## 7

Տարածվում եր այդ յերգը, վորպես դառը սրտերի  
Վշտամորմոք, սբատարուխ արցունքների ծոր,  
Ցեվ հայունները յերգի իշնում եյին վարդերին,  
Վորպես կաթիլ առ կաթիլ սրալից իշնող ցող:  
Ցեվ հայունները յերգի իշնում եյին սրտերին—  
Հոգու ըրդեհ եր կարծես բռնկել որում,  
Զերմությունից այդ յերգի բույրն եր քամվում վարդերի,  
Ու ներծծվում ամեն մի զգայուն հոգում,  
Հնչունները այդ յերգի այրում եր սիրտը նրանց,  
Վորպես բոցի կաթիշներ պոկված արմից,  
Լուս եյին մետաքսն իրենց բարձերին նստած  
Միրունները մարմարեկ խանի հարեմի

## 8

Ու յերք սառեցին յերգի թթվիոները յեթերում,  
Խնչպես մրմունջն ազանի իրիկվա պահին,  
Խնչպես հանգչում ե խաղաղ ամեն գիշեր թփերում  
Առուների յեղերքի զյուլը սարահին,  
— Կանչի ծերուկ, — ասացին սիրուները հարեմի,  
— Կանչի թող գան ու յերգեն մինչն իրիկուն,  
— Կանչի, ծերուկ, զեր շատ կա մայրամուտին արևի,  
Աղերսեցին մեկ առ մեկ նրանք ներքինուն  
Ու ներքինին թոնթորաց, քիչ համառեց, տրանջաց,  
Հետո ժպտաց խորամանկ, բացեց փեշն իրա,  
Ցեվ արծաթի թումանը նրա փեշում ծնգաց,  
Ու փայլ փոեց խորշումած յերեսին նրա:

## 9

Ցեվ մինչ գնաց ներքինին անցնելով բակ ու պարտեզ,  
Կանայք կարգի բերեցին զլուխ ու վրա,  
Սև մետաքսե ամպերի նրբին ծվենների պես  
Իջան նրանց զլիերին ոռւրանդ ու չաղրաւ  
Սև մետաքսե ամպերի նրբին ծվենների պես  
Գրկեց ամեն մի չաղրա պայծառ մի լուսին,  
Թաթախվեցին լույսի մեջ սև ոռւրանդները կարծես,  
Ու խմեցին լույսերը նրանց յերեսի:  
Ու մինչ չընաց Նաջիրան համբուրվում եր հովի հետ,  
Մինչն ոռւրանդը նրբին յերեսին իշներ,  
Ու մինչ հնում եր խանդից վողջ պարտեզը բուրապետ,  
Պարտեզ մտան սբատահույդ յերկու յերգիչներ

## 10

Ցեկան կանգնեցին նրանք խանումների գեմ զիմաց,  
Նրանք յերկու յերգիչներ, յերկու ուռ դալար,  
Ցերկու թխաղեմ ջահել, նախշուն արախչին զրած,  
Չուխտակ աչքերի վրա՝ չուխտակ սև կամար,  
Մեծ՝ Սաֆարն ավելի բարձրահասակ ու գժույն,

Փոքրը՝ Զեյնալը սիցուն խոշոր աչքերով,  
Վորոնց մեջ կյանքը կարծես լցըել եր վիշտ, տիսրություն  
Ու դարձրել եր նրանց տիսրությամբ գերող  
Կանգնել եյին նրանք լուռ, յերկու ջահել յերգիչներ,  
Յերկու յնդրայլ հարազատ իրար կողք կողքի,  
Աչքերն հառած յերինքի փիրուզներին, դեպի վեր,  
Հաշեց նրանց հոգեթով զողանջը յերգին

## 11

Մորաց թալիիը անհուն հնչյուններից այդ յերգի,  
Մըսիացին ծաղկոցի վարդերը բոյր,  
Դյութիեց զալար մի նոճի ավազանի յեղերքին —  
Նաջիբան եր՝ խոների ծովի մեջ մոյոր,  
Բուրեց ճերմակ մի շուշան թովչությունից այդ յերգի,  
Նաջիբան եր՝ հառաչեց մորմոքով խորին,  
Ծաղկած, փարթամ նշենին թափեց թերթերն իր ծաղկի,  
Նաջիբան եր՝ արցունքի շիթերն աչքերին:  
Ավազանը բյուրալիք գրկեց արևը պայծառ,  
Նաջիբան եր՝ Զեյնալի պատկերը հոգում,  
Զեկիյունն անուշ թովչությամբ ծաղկանոցով անց կացավ,  
Նաջիբան եր՝ սիրո վառ ծաղիկ եր ջոկում:

## 12

Յեվ թրթիները յերգի անձրեկի պես հորդառատ  
Յերկու քուլա ամպերից թափիլում եյին վար,  
Արդուլ խանի հարեմի կանանց աչքերի առաջ  
Բացում սիրս, տանջանքի, վշտի մի աշխարհ,  
Լուսե եյին նրանք լուռ ու նրանց հետ միասին  
Վարդաստանն եր հառաջում բույրերով բոլոր,  
Յեվ ծաղիկները ասես վառ թերթերը լվացին  
Թրթիներով այդ յերգի՝ արցունքների ծոր  
Յեվ մինչ հնչում եյին մեղմ հնչյունները այդ յերգի,  
Համսում եր որք արգեն իրիկվա պահին,  
Կուչ եր բերում նըրահյուռ՝ առուների յեղերքին՝  
Շեփորները գույնգգույն գյուլը սարահին:

## 13

Լոեց յերգը, Փանջարից աղախինը հարեմի  
Գունաթափ ու ահարեկ կացավ ներքեւ.  
— Խանը գալիս ե, — կանչեց, ու կարծես մի անզամից  
Մոռացվեցին վայրկյանում յերգիչ ու յերգեր,  
Ու շփոթված վեր յելան սիրունները հարեմի,  
Վորը բարձը մոռացած, վորը թաշկինակ,  
Մեկն ելիր սիրտը թողած սանդուխքների քարերին՝  
Յերգի մորմոքով լեցուն թրթիների տակ,  
Նաջիբան եր, մոտեցավ յերգիչներին այդ յերկու,  
Քաշեց ոուրանը դեմքից, վորպես մի լուսին,  
Աչքերի մեջ բորբոքված կրակները իր հոգու,  
Անխոս նայեց Զեյնալի տրտում յերեսին:

## 14

Անխոս նայեց, հեռացավ, վորպես չքնաղ մի յերազ,  
Վորպես հովը, անվրդով ջրերի վրա,  
Վորպես մշուշ նրբաթի կատույտ ջրերից յերած,  
Վոր քաշում ե մետաքսե փեշերը իրաւ,  
Ու Զեյնալի ջինջ հոգում, համբ պատկերի նման,  
Մնաց թալսուտ աշքերի անմար մի հայացք,  
Մնաց ամպի պես արտում չքնաղպեղ նաջիբան՝  
Մունջ հայացքը Զեյնալի աչքերին հառած,  
Յեվ մինչ մարած աչքերից հարեմի ծեր ներքինու՝  
Կարիճի պես թունավոր հայացքը իջներ,  
Թողին պարտեզը չքնաղ, ու շահիներ ձեռքերում,  
Ու հեռացան գլխիկոր յերկու յերգիչները:

21

## ՅՆՐՐՈՐԴ ՅՆՐԳ

1

Խոր քնի մեջ բնկղմած՝ Արդուլ խանի հարեմում  
Հույսերն հանգել են վաղոց, չկա վոչ մի ձայն,  
Վարդաստանը հոփի դեմ բնրուշ վարսերն եւ սանրում,  
Հովք բույրերն եւ նրա անում ցիր ու ցան,  
Սուսամրարը սվավաց, կարծես լալիս եւ տրասում,  
Ու հասաշում հոգեթովի բույրերով իրա,  
Հուսնի սինին վերկից հալած արծաթ եւ թափում  
Շատրվանի շողշողուն ջրերի վրա  
Ազազանի ջրերում որորդում եւ մի պարտեզ՝  
Չյունափրփուր ու չընադ շուշաններով լի,  
Այդ աստղերն են, յերկնքի արցունքները սիրակեղ,  
Վոր նախշել են ջրերի հատակ հայելին:

2

Վարսերն արձակ, ոթախում, լուսնի շողը լերեսին,  
Բադամածեն աչքերի թարթիչները կախ,  
Թիկնել եւ լուռ Նաջիրան ասեղնակար իր քարձին,  
Գլխում խոհեր անհամար ու սրտի մեջ վախու  
Հեռուներից քաղաքի, հովի շուրթերին բեկրեկե,  
Համնում ե մի անցորդի ախուր քայաթին,  
Ու հեծկլտում ե կարծես Նաջիրայի սրտի հետ  
Շատրվանը լուսաշող՝ խավար հայաթից,  
Ու հեծկլտում ե կարծես վարդանոցում բույրով լի  
Թրթիռներով թափալի սրտակեղեր յերգ,  
Ու տեմնում ե կարծես նա ավազանի հայելին,  
Ու նրա մեջ որորուն սևաչյա մի դեմք:

3

— Ո՞վ ստեղծող տրարիչ—մըմնջում ե Նաջիրան,  
Փառքիդ, կամքիդ մատաղ յես ու քո զորության,  
Թոշունին թե ես տվել, ոձերին ճար ու ճամբա,  
Մարդուն հանձնել ես մարդու անդութ գերության:  
Ահա վասներդ եմ ընկել, յեւ՝ փոշին քո վոտքերի,  
Թե մեզը եմ գործում քո զեմ տուր իսձ կրակի,  
Թե չե՞ փրկից, ազատիր, մի թող իմ հոգին զերի,  
Մի թող ջաւել իմ կյանքը խանը խորտակի...  
Մըմնջում ե Նաջիրան, լուսնի շողը յերեսին,  
Միրտը ամպի մի քուլա ու աչքերը թաց,  
Մետաքսաթել վարսերը փոած մեջքին և ուսին...  
Դուռը բացվեց ու շեմքին խանը յերեաց:

4

Հազած յերկար մի կարա, ձեռքին թաղրեն ու սաթի,  
Ու կրքերից բռնկած ժայխտ շուրթերին,  
Վորպիս յերկու կեռ խանչալ՝ կախած բեխերն արծաթի,  
Խանդնեց խանը տարփանքի փայլը աչքերին:  
Հետո զանդաղ մոտեցաց, դողաց չքնադ նաջիրան,  
Վորպիս հողմից սորուն դարարանցուդ ուռ,  
Վորպիս յելավ ու կանդնեց ծեր խանի դեմ հանգիման,  
Աչքերը թաց ու հոգին քարերի պես յուռ:  
— Ծոդ ե իջել սիրունին վարպե այտերին, ինչնոււ,  
Ամագել ե իմ սիրելին, յերկնինքն իմ հոգոււ,  
Նաջիրային արզյուր ինչ խորունի մի վիշտ ե տանջում,  
Ասա, վարդու, այս ժամին ինչնու յես անքուն:

5

Ու կռացավ ծեր խանը Նաջիրայի շուրթերին՝  
Խաչպիս կարմիր վարդերին ձյուն իջներ հանկարեժ,  
Ու Նաջիրան կարծես իր հոգու մոայլ ամպերի  
Վորոտումայ դառնորեն հանկարծ հեկեկաց,  
— Թույլ առը, խան իմ, հեռանա ք հարեմից Նաջիրան,

Նրա հայրը չորան ե գառների պես հեզ,  
Նաջիբայի որրոցը յեղել ե հանդ ու չհման,  
Աձել ե նա դաշտերի վայրի ծաղկի պես  
Աղի արցունքն աչքերին, սրտի մեջ վիշտ ու մրմռա,  
Քո վուրբի հող Նաջիբան ազաշում ե, խան,  
Նա կթոշնի, հՀանդի վշտամորմոք ու տիտուր,  
Թույլ տուր, խան իմ, հեռանա գժրախտ Նաջիբան:

## 6

Մոալլվում ե ծեր խանը, մուժով լցվում ե հողին,  
Ինչպես զիշերվա պահին սարը Ենաւի,  
Ու զայրույթը՝ վանդակած վազը ինման մոլեգին՝  
Նրա կրծքի վանդակին դադար չի տալիս  
Մոնչում ե կրծքի տակ, կուրծքը յելնում ե իջնում,  
Յերակները ճակատի մախում են արագ,  
Կարծես հողու մեծ նրա վայրագ մի ճիչ ե հնչում,  
Վիրափոր մի զազանի ցնցող ազադակի,  
Բայց զապում ե ծեր խանը իր զայրույթը կատաղի,  
Ու զողոշուն, հուզմունքով ասում ե նրան,  
Մինչ թափում ե այտերին արցունք-աստղերը աղի,  
Վշտամորմոք ու տրտում զժրախտ Նաջիբան:

## 7

— Լսիր, սիրուն, կմեռնի, չի դիմանա առանց քեզ,  
Առանց արև, առանց ող խանը կմարի,  
Խորշակահար իմ հողում սարերի հով գու ինչպես,  
Վարդերի բույր գու ինչպես իրիկվա պահին,  
Քեզ հանդերի, սարերի վայրի կարուն ե քաշում,  
Աղրյուների գլուխ ալմաստ հայելին,  
Իսկ իմ կյանքը գունաթափ ու ցրտահար մի աշուն,  
Ռւզում ե քո կենսատու բույրը վայելիս  
Թարթիչներք թուրի պես իմ սրտին եռ խրել զու,  
Նրանցով եմ չնչում յես, ապրում աշխարհում,  
Քանի ցուրը պատկերիդ լույս ե տալիս իմ հոգուն՝  
Պիտի մնաս, սիրելիս, զու իմ հարեմում,

## 8

Ասաց, մսայլ հեռացալ Արդուլ խանը գառնացած,  
Հողին հուզված ալեծուփ ջրերի նման,  
Յեկ խոհերին անձնատուր սանդուղքներով իջավ ցած,  
Աչքերի զեմ շարունակ տրտում Նաջիբան:  
Դրսում պարտեզն եր շնչում ծաղիկներով բազմաբույր,  
Ավագանը աստղերից գորգեր եր հյուսեւ,  
Վարդերի վաշ շարթերին զեփյուռների նուրբ համբույր,  
Իսկ լուսինը իր ճամբան վաղուց եր կիսեւ,  
Շրջում եր նա մասխոն, իր մտրերով օրորուն,  
Արդուլ խանը՝ սև ամալի քուլայի նման,  
Նրա վրա լուսինն իր արծաթ հայտցըն եր ծորում,  
Աչքերի զեմ շարունակ տրտում Նաջիբան:

## 9

Մթնեց կարծես Լուսնկան, տչրի պայծառ բիրի պես  
Մտավ ամուկ հոպերի թարթիչների տակ,  
Լուսածաղը խափառում փալլուն թրերն իր ճոճեց,  
Հեռվից լովեց գանգերի գվարթ ազադակի,  
Քաղաքի խուլ, ճեռափոր փողոցներից զողանջով  
Քարավաններն ուղտերի յեկան ու անցան,  
Ու ճեռացան, ճեռացան, գարձան ճեռվում շառաչող  
Աղմկահույզ ջրերի ալիքների ճայն:  
Յեկ ծուխի պես յերկնաձիգ, կտուրներից գեպի վեր,  
Բարձրացավ մեզ ու թափառու մրմռնջն ազանի,  
Վորպես աղերս, ազաշանք ե յերկյուղած ու կերկեր,  
Վոր ալլահը նոր օրվա չարը խափանի,

## 10

Յեկ լուսացափ: Արեր վոսկեսապատ ուղտի պես  
Կարծես ծնկի իջավ լուրթ յեռան պոռունգին,  
Թափանցեց մի բազմերանգ, բարձր պատուհանից ներս  
Ծիածանի գույներով փովից հատակին  
Քնած եր զես Նաջիբան գունաթափ ու գալկահար,  
Գանգուրները տարածված զեմքին ե ուսին:

Պատուհանից թափանցող ծխածանը գունավառ,  
Փովել եր լուս, մարմարե, գունատ յերեսին։  
Յեվ թվում եր՝ ունկնդիր վշտամորմոք մի կանչի,  
Նրա կուրծքը թախիծով պիտի հառաջեր,  
Յեվ թվում եր, զոր կամաց, Նաջիրայի ականջին,  
Յերգում եյին սրտահույզ յերկու յերգիչներ,

## Չ Ո Ր Շ Ա Ր Կ Յ Ե Ր Կ

1

**Ծ**իկնած թավիշ բարձերին, դեմք ղեյլանն արծաթի,  
Արզու խանը խոների ծովի մեջ անվերջ,  
Ինչպես մոայլ մինարեն թանձր մշուշը պատի,  
Ինչպես ղեյլանը ծխի քուլաների մեջ,  
Ղեյլանի մոտ ծնկաչոք, հարեմի ծեր ներքինին  
Նստել եր լուս, սիրտը մութ կասկածներով լի,  
Խանը կանչել ե նրան, ու նա հայացը քետնին,  
Սպասում եր սրտադող նրա գեմ հիմին  
Սակայն ծխում եր նա զեռ, հոգին պղտոր ու հուզված  
Վորպես ծուխով հազեցած ջուրը ղեյլանի,  
Ու ներքինին փչում եր մեկ-մեկ կրակը մարած,  
Վոր ղեյլանը ծխի բիլ քուլաներ հանին

2

— Ասա ինձ, շուն, շուտ ասալմայ ես հսկում իմ դռան,  
Արդյոք ով ե սողացեյ իմ պատերից ներս.  
Ասա, ինչնու յե այդպես թախօտա դարձել Նաջիրան,  
Ճիշտը ասա, թե չե, շնչն, կսպասեմ յես քեզ:  
Ու հայացը շեշտակի ուղղեց նրա աչքերին,  
Վորպես արյունով ներկված մահառիթ մի սուր,  
Ահից գողաց, գունատվեց ու կարկամեց ներքինին.  
— Դե շուտ, ել մի մտմտա, ճիշտ ովատախան տուրը  
Բայց ներքինին լուս եր զեռ, կարծես ահից քարացած,  
Ճետո բացեց իր սիրտը, վորպես մութ զիշեր.  
— Եերեկ, իրիկա պահին, իմ տեր, իմ խան վողորմած,  
Պարտեզ մտան յերգելով յերկու յերգիչներ.

## 3

— Նրանք յեկան, յերգեցին, լաց եր լինում՝ նաջիրան,  
թարթիչները ամպի պես կախած ջրերին,  
կանգնել եր նա՝ ջրափին թեքված ու ռենու նման,  
իր տոքերին, հույզերին, խոներին գերի  
Ու յերը յերգը վերջացավի, յերը լուր կախվեց յերեկոն,  
Մոտեցավ նա Զեյնալին, կանգնեց զեմ դիմաց,  
թաղիշ բողոք պատուած, վորպես վարդի մի կոկոն,  
նա յերեսից ոռւրանը իջեցըրեց ցած,  
իջեցըրեց ու նայեց Զեյնալի սև աչքերին,  
Այդ աչքերը փայլեցին, վառվեցին կարծես,  
Բայց վոնդեց Զեյնալին, խան, քո շունը, քո գերին,  
Վողորմած խան, բոլորը՝ ինչ տեսել եմ յես.

## 4

Յեվ կատաղած արձակեց խանը վայրագ աղաղակ,  
Վոտքի թոավ ու պատից մորակը խլեց,  
Ու մորակը ոձի պես Արգուլ խանի ձեռքի տակ  
Ոձագալար քշոցով ողում պատվեցի.  
Իջավ սմբած ներքինու կողերին ու վոսներին,  
Ու վոննում եր, աղերսում նա գետնատարած.  
— Խան, քո շունն եմ, զթա ինձ, քո ստրուկը, քո գերին,  
Բայց մորակը բերանին իջավ կատաղած,  
— Շունը աղնիվ ելինում, ճավատարիմ, հոգատար,  
Շունը աղնիվ ե հսկում իր տիրոջ գուան,  
Շունը վազում, ճաշում ե, յերը տեսնում ե մի ստար,  
Ու չի թողնում իր տիրոջ գույքը գողանան:

## 5

Քայց հոգնեցին, թուլացան բազուկները ծեր խանը,  
Շպրտեց նա մորակը ներքինու վրա,  
Խնչան թունավոր մի ոձ վերջին թոփչքն իր անի  
Եկ մորակը ոձի պես փաթաթվեց նրան:

Իսկ ներքինին նվում եր ու տնքում եր նվազած,  
Խանը շրջում եր հուզված, փնչում, քըթմնջում,  
Ու զայրույթը, վորպես վազը՝ հազիվ վանդակից փախած,  
Աչեղ ձայնով վոննում եր, կանչում, մանչում  
Ճետո խաղաղվեց կարծես նրա հոգին ալեկոծ,  
Նստեց, հանձնեց մտքերը յելլանի ծուխին,  
Բայց զեռ իր սիրող լափող հոգու խորքերից մի բոց,  
Ժպիտ փոեց նրա ծեր զեմքին ու բեխին:

## 6

— Մոտ յեկ, — ասաց ժպտալով, — իդուր ծեծեցի յես քեզ,  
Աշխարհի մեջ, ներքինի, ուժով սեր չկա,  
Ճեշտ ե տիրել յերկրներ մեծն իսքանդարի պես,  
Բայց վոյ մի գորք չի տիրի սիրտը աղջկա:  
Լավ ե ինքս իմ ձեռովով, իմ իսկ աղջկա նման  
Քյարին անեմ, թող լինի կինը Զեյնալի,  
Թող բախտավոր լինի նա, իմ սիրելի նաջիրան,  
Դրանով ել ծեր սիրտս ուրախ կլինի  
Գտիր, կանչիր Զեյնալին յեղորը հետ այս իրիկուն,  
Ասս նրան բոլորը՝ ինչպես ասացի,  
Կտամ նրան հող, այցի, կտամ նրան փող ու տուն,  
Թող արժանի լինի նա իրա սիրածին

## 7

Ճետո, կարծես թե հուզված, յերկարածիք մի շնչով  
Ծծեց ծուխը յելլանի կարուսով անհազ,  
Կարծես ուզում եր խեղզել իրա հուզմունքը ծուխով.  
Ու մորմոքները սրտի թաղել նրա տակ  
Իսկ ներքինին ընկծված, հուռ լուս եր խանին,  
Ու նայում եր ակնապիշ աչքերին նրա,  
Կարծես ուզում եր հոգու վոյջ խորհուրդները քամի,  
Կարծես ուզում եր նրա հոգին հասկանա  
— Կկանչես ե մի մրլա, վոր գա քյարինը անի,  
Իսկ նաջիրան հենց հիմա թող գա ինձ այցի,  
Գատմիր նրան մեկ առ մեկ վորշումը իր խանի,  
Ել ասելիք չունեմ քեզ, հիմա հեռացիր.

Եեվ ներքինին զլսիկոր, ծեծված, հուղված ու նկուն  
թողեց ոթախը խանի վորպես մի ստվեր,  
Աչքերի մեջ տիսրություն, հոգում զարմանքը անհուն  
Նա իր խանից չեր լսել այդախի բան գեռ  
Իսկ ոթախում գեռ ծխի քուշաները զելլանի  
Բարդ-բարդ յելնում եյին վեր ու ի հնում նորեն,  
Ամբոխվում եյին ողում, վորպես խոհերը խանի,  
Վորոնց ծայրը ով գիտե վորտեղ եր կորել...  
Ամբոխվում եյին ողում, հետո ցրվում, տարածվում  
Մինչազի կապտավուն շղարշի նման,  
Յերբ զեփյուղի նման մեղմ ոթախի դուռը բացում,  
Ներս և մանում վշտահար, թախծոտ Նաջիբան

Նա մոայլ եր ու տրտում, վորպես աշնան առավոտ,  
Վորպես անձրեի պատրաստ յերկինքը ամպած,  
Կանգնել եր լուռ, անվստահ ոթախի վակ դռան մոտ,  
Հյուսերն արձակ, այտերը արցունքոտ ու թաց,  
—իմ սիրունի աչքերը, թարթիչները թաց են գեռ—  
Ասաց խանը սիրտը լի թախիծ ու հուզում,  
Գիշերն ամբողջ յերգել են յերկու ջահել յերգիչներ,  
Ու մորմորել են գուցե նրան յերազում,  
Գիտեմ բոլորը արգեն, գիտեմ, սիրել ես նրան,  
Այն սեաշյա ու սիրուն յերգիչ Զեյնալին,  
Կարելի յե հնարքով թոշել աստղերի վրա,  
Բայց վոչ մի մարդ չի շինի սրտի բանալին,

Իսկ Նաջիբան մոմի պես լուռ հալվում եր իր տեղում,  
Խանի քաղցը խոսքերից կարծես շանթահար,  
Նրա մարմնով կարծես թե ոկ ոձեր եյին սողում,  
Մնացել եր խոհերի ծովի մեջ շվար,  
—Գնա, վարդս, նրա հետ քյարին կանեմ այս գիշեր.

Գնա, բախտավոր յեղիր, թող այդպես լինի,  
Արդեն կյանքիս մահաշունչ ծանը ձմեռ ե իշել,  
Քո բախտով ել իմ սիրտը ուրախ կլինի,  
Յեվ ոթախից գուրս յեկավ խանը թախծու ու հուղված,  
Մոայլ, վորպես անթափանց ու խալար գիշեր,  
Իսկ Նաջիբան՝ արցունքոտ իր աչքերի գեմ կանգնած  
Տեսնում եր լուռ ու տիսր յերկու յերգիչներ

*Յերգիչներ*

## ՀԻՆԳՍՐՈՐԴ ՅԵՐԿ

1

ի ջաղի իրանի վրա իրիկունը հերարձակ,  
 Ու ծխի պես թանձրացավ մութը կապտավուն,  
 Յեղի իրիկա կերկերուն, թախծոտ ազանների տակ  
 Իր կրակները վառեց ամեն հյուզ ու տուն  
 Յեղի իրիկա կերկերուն թախծոտ ազանների հետ  
 Արդու խանի պարտեղից բուլղեր բարձրացան,  
 Յեսամանը, շուշանը ու վարդենին բուրավետ  
 Իրենց բույրը սփռեցին ողում ցիր ու ցան  
 Ու փիրուգի լեռներից իջավ մեղմիկ ու թագուն  
 Սիրահարը վարդերի՝ գեղիյուռը նըրին.  
 Թպրտացին ծառերին մոայլ չգիլկներն ու բուն,  
 Ստվերների նման սե, նրանց պես մթին:

2

Արդու խանի պալատում, ոթախներում, պարտեղում  
 Տիրում եր մի անսովոր աշխուժ յեռ ու զեռ,  
 Խանը կարծես անհանգիստ, ոգում թախիծ և հուզում,  
 Իր հյուրերին՝ անհամբեր սպասում եր զեռ  
 Խեկ նաջիրան զեռ տրտում, մտամոլոր եր ահա,  
 Թպրտում եր իր սիրաը վորպես ծտի թե,  
 Յերբ բակ մտավ իր եղով ճերունափառ մի մոլլա,  
 Մեկն ել լապտերը ձեռին՝ կողքից հերձն,  
 Ու մինչ մոլլան յերերուն, շարժումներով անվստան  
 Ծեր ներքինու ողնությամբ իր եշից իջներ,  
 Սրտերը իր կասկածով, ու քայլերով անհաստատ  
 Պարտեղ մտան սրտահույց յերկու յերդիչներ

3

Յեկան, բարձրացան նրանք սանդուղքներով դեպի վեր,  
 Բացվեց գուսլ նրանց գեմ խանի ոթախի,  
 Ու խանի գեմ Զեյնալի սիրտը կարծես թե հալվեր,  
 Այդ ամոթից եր արդյոք, թե նրա վախից,  
 Ու ներս կանչեց ծեր խանը յերգիչներին այդ յերկու՝  
 Աչք ածելով Զեյնալին վոտքից մինչ զլուխի,  
 Նրա հստակ աչքերում զգաց կրակը հոգու,  
 Զգաց թախծոտ յերգերի շունչը սրտարուլ:  
 — Նստեք, — ասաց ծեր խանը, Ու լուռ նստեցին նրանք  
 Արդեն բարձերին թիկնած մոլլի գեմ զիմաց  
 Զեյնալի մունջ կրծքի տակ բորբոքվել եր մի կրակ,  
 Ու նա ամրող իր մարմնով հանկարծ սարսոաց:

4

— Տղաս, ուրախ զգա քեզ, հալալ քեզ իմ նաջիրան,—  
 Սսաց խանը նայելով գեմքին Զեյնալի,—  
 Նրա հետ քեզ այս զիշեր կպսակեմ անպայման,  
 Հիմա մի բան յերգեցեք քսողը, սրտալի  
 Խոկ նաջիրան պարտեղում, ավազանի յերգերին  
 Լաց եր լինում սիրտը խոր սարսափներով լի,  
 Տարածվեցին յերբ տխուր թթիկները հին յերգի,  
 Ու միացան պարտեղի թովիչ բույրերին,  
 Ու մինչ արցունքն աչքերին մորմաքում եր նաջիրան,  
 Ականջն յերգի մահաշունչ տխուր կարկաչին,  
 Աղախինը մոտեցավ սահող սավերի նման,  
 Ու ինչ վոր բան շշնջաց նրա ականջին:

5

Ասաց, շտապ հեռացավ վորպես հովք, վոր կամաց  
 Չոր սաղարթները շոյում, անցնում ե արագ,  
 Ու նաջիրան մնաց լուռ, սարսափներով քարացած,  
 Իր կոկորդի մեջ խեղդած ճիչ ու աղաղակի  
 Խոկ յերգը գեռ զեղգեղում ու տարածվում եր ողում,

Սրտակեղեք ու հուզիչ, վորպես մահվան բոթ,  
Ու թրթիռները յերգի մի սիրտ եյխն ծըլատում,  
Ավազանի աստղաի ջինջ ջրերի մոտ,  
Ու թրթիռները կարծես յուսնի արծաթ շողերում  
Մառում, թափում եյխն վար, վորպես արցունքներ,  
Վոր թափիում եր միտլար շատրվանը ջրերում,  
Վորպես պայծառ, շողշողուն բյուրեղյա ակներ

## 6

Այնտեղ յերգում եյխն դեռ Ու յերգի տակ որորուն  
Վոլորում եր ծեր մոլան թազբեն սև սաթի,  
Եերը մի պառավ վառ չայի բաժակները գույնզգույն  
Մեջտեղ դրեց սինիոր վայլուն, արծաթին  
Ու յերը յերգը ավախտվեց, խանը դարձավ Զեյնալին.  
—Ապրես, տղաս, —ասաց նա, —բախտավոր լինես,  
Ու ծաղկազարդ մի բաժակ մեկնեց նրան՝ թեյով լի,  
Վոր հալոցքի պես վոսկու ծփում եր կարծես  
—Նաջիբային ներս բերեք, —կանչեց խանը սրտաբաց,  
Թող գա, նստի, այս գիշեր պսակն ե նրա.  
Ու Զեյնալի սիրտը խոր թռչունի պես թարտաց,  
Ու ջերմություն զգաց նա այտերի վրա

## 7

Սակայն չկար Նաջիբան, նրան վնասում եյխն դեռ,  
Աչից գեղնել եր արդեն ծերուկ ներքինին,  
Սիրտը լի եր յերկյալով, դողում եյխն վրտ ու ձեռ,  
Աղերսում եր վոր նրան մի կերպ գտնեյխն  
Սրդուլ խանի պալատում խանվել եյխն իրար,  
Փնտում եյխն ամեն տեղ, ամեն մի անկյուն,  
Սակայն իզուր, Նաջիբան չեր յերենում ու չկար,  
Վողջ պալատը հագել եր վիշտ ու ախրություն  
Իսկ շատրվանը դրսում լուսնի արծաթ շողերում  
Հեկեկում եր ու թափում աստղե արցունքներ,  
Վորոնք թափիում եյխն լի ավազանի ջրերում,  
Վորպես պայծառ, շողշողուն բյուրեղյա ակներ

## 8

Յեկ մինչ վիստում եյխն դեռ Նաջիբային պալատում,  
Զեյնալը լուռ դատարկեց բաժակը չայի,  
Նրա ծովի պես փրփրած հոգում սիրոն եր թպրտում,  
Խնչպես փոթորկի պահին թմերը ճայի  
—Եերգիր, —ասուց ծեր խանը —մենակ յերգիր այս անգամ,  
Թող քո յերգի զողանջով զա քո Նաջիբան—  
Յեկ բեխերի տակ կարծես կախվեց ժպիտ մի տարտամ,  
Ու սպրէնեց կարծես նա կտալի նման,  
Բայց սարսափից չովեցին մե աչքերը Զեյնալի,  
Զայնը խզզաց, յերգի տեղ լովեց թույլ նվոց,  
Ու կոկորդից վարդագույն ու վառ արյուն եր գալիս,  
Վորպես սրտում կուտակված սիրո այրող բոցի

## 9

Մինչ Սափարը հեկեկում, համրութում եր Զեյնալին,  
Քարացել եր իր տեղում արգեն ծեր մոլան,  
Յեկ քրջում եր խանը չարախինդ ու սրտալի.  
—Ե՛յ, կանչեցեք, հարսնիր ե, թող գա Նաջիբան,  
—Ե՛յ, կանչեցեք, —գիշի պես հսկում եր խանը ծեր,  
Թող գա, թող գա, այս գիշեր պսակն ե նրա.  
Մինչ այդ յերկու յերգիներ արդեն տեղից բարձրացել,  
Գնում եյխն զլխիկոր՝ վաթաթված իրար  
Մինչ շատրվանը այնտեղ, լուսնի արծաթ շողերում  
Հեկեկում եր ու թափում աստղե արցունքներ,  
Թողին պարտեղը խանի խորունկ մի վերք սրտերում,  
Ու հեռացան արցունքով յերկու յերգիներ

## 10

Առավուտան Զեյնալը ել չտեսավ վառ արփին,  
Սառել եյխն վարդարույր շուրթերը նրա,  
Իսկ խանի վառ պարտեղի ավազանի յեղերելն  
Գտան մետաքս մի ոռւբանդ ու մի չաղըբա:  
Ու ծառաները վշտով ու արցունքոտ աչքերով

Ավաղանից հանեցին Նաջիրայի գին,  
 Նրա ճակատը կարծես հովարուս եր մեզմ մի հոգ,  
 Յեվ համբուրուս եր կարծես վոսկեվառ արփին,  
 Ու թվուս եր՝ ունկնդիր վշտամորմոք մի կանչի,  
 Նրա կուրքքը թախիծով պիտի հառաչեր,  
 Ու թվուս եր, վոր կամաց, Նաջիրայի ականջին  
 Ցերգուս եյին սրտահույզ յերկու յերգիչներ,

Եեվ դերվիշը ավարտեց, Ու մորուքին ձյունափռու  
 Թափեց, վշտի, թախիծի գառը արցունքներ,  
 Հառաչեցին նրա հետ՝ լուղնեղը վշտահար,  
 Բազմությունը քարացած սպասում եր դեռ  
 —Դերվիշ ինչո՞ւ յես լալիս, բնչն ետանջում քո հոգին,  
 —Դերվիշ ինչո՞ւ յես մոայլ կախված ամպի պիս,  
 —Դերվիշ, ովկ ետ արցյոք, նվկ ծնունդ տվել այդ յերգին,  
 Վոր մորմքով ու վշտով պատեց մեզ ու քեզ,  
 Եեվ գլխարաց, զգգված, մազերն հովից ցիք ու ցան,  
 Սիրտը հանձնած խոհերի թանձը մշուշին,  
 Արցունքախեղդ կոկորդով շշնչաց նա մեղմաձայն.  
 — Այդ Զեյնալը յեղբայրն եր դժբախտ դերվիշին

1984—1985



53868

ԳԻՆՈ 50 ԿՊՊ.  
ԿԱԶՄԱ 25 ԿՊՊ.



Ի. САՐՅԱՆ  
ԳՅՈԼՆԱՐԱ  
Գիզ ССР Армении, Эривань,